ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

14 ապրիլի 2026 թվականի N 183 - Ա

«ՇԻԿԱՀՈՂԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆԻ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ ՀԱՍՄԻԿ ՂԱԶԱՐՅԱՆԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՏՈՒՅԺ ԿԻՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Քննարկելով «Շիկահողի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության (այսուհետ՝ Կազմակերպություն) տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար Հասմիկ Ղազարյանի նկատմամբ կարգապահական տույժ կիրառելու հարցը՝

պ ա ր զ ե ց ի՝

2026 թվականի մարտի 12-ին «Շիկահողի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ է ուղարկվել ՀՀ Սյունիքի մարզպետի գրությունը՝ դպրոցի օպերատոր Նարե Տիգրանի Հովհաննիսյանին 02.05.2024թ.-ին հատկացված դասաժամերի և 01.05.2025թ. հատկացված դասաժամերի հիմքերի վերաբերյալ գրավոր բացատրություն ներկայացնելու պահանջով, որին ի պատասխան՝ Կազմակերպության տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար Հ՝ Ղազարյանը 2026 թվականի մարտի 16-ի գրությամբ հայտնել է, որ «Նարե Տիգրանի Հովհաննիսյանն այլևս դպրոցում չի աշխատում,սակայն,ըստ տնօրենի թ. 42 02.09.24թ հրամանի, մինչև մրցույթի կայանալը, հատկացվել է ժամանակավորապես պարապելու ժամավճար կերպարվեստ, տեխնոլոգիա, երաժշտություն ընդ՝ 12 ժամը, իսկ ըստ տնօրենի հր՝թ՝37 01՝09՝25թ՝, նաև ավելացել է 7-րդ դասարանի կենսաբանության 2 ժամը, որպես Խ՝ Աբովյանի անվ՝ մանկավարժական համալսարանի 3-րդ կուրսի ուսանող»:

«Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ուսումնական հաստատության ուսուցիչ կարող է լինել այն անձը, որն ստացել է բարձրագույն կրթությամբ մանկավարժական համապատասխան որակավորում կամ ունի բարձրագույն կրթություն և վերջին 10 տարվա ընթացքում

մանկավարժական (կամ ուսուցչական) կամ գիտամանկավարժական գործունեության առնվազն հինգ տարվա աշխատանքային ստաժ:

Վերը նշվածից հետևում է, որ Նարե Հովհաննիսյանին 02.05.2024 թվականին և 01.05.2025 թվականին Կազմակերպությունում դասաժամեր տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար Հ. Ղազարյանի կողմից տրամադրվել են «Հանրակրթության մասին» օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասի խախտմամբ:

Հիմք ընդունելով վերը նշված փաստերը, Կազմակերպության տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար Հ. Ղազարյանի գրավոր բացատրությունը և ղեկավարվելով «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով, Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 218-րդ և 220-րդ հոդվածների 1-ին մասերով, 223-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, 224-րդ և 226-րդ հոդվածներով, «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի 1-ին մասով, 2-րդ մասի «բ» կետով,

ո ր ո շ ու մ ե մ.

Կազմակերպության տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար Հասմիկ Ղազարյանի նկատմամբ կիրառել «նկատողություն» կարգապահական տույժը:

2026-04-14 17:42:07 GMT+4
Հավաստված է ԷԿԵՆՑ-ի կողմից

ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ **Ռ. ՂՈՒԿԱՍՅԱՆ**

2026թ. ապրիլի 14
ք. Կապան